

ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՄԱՐ


12073

ԳՅՈՒՂԱԿԱՆ
ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿՈՒԼՆԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

(Զրույցներ ընկերների հետ)

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԿԵՆՏՐԱԼԻԶԱՆ



ՀԱՍՏԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ
ԱՐԴՄԻՈՒԹԻՈՒՆ

338.1 (47)

91

ԳՅՈՒՂԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ
ԿՈԼԼԵԿՏԻՎԱՑՈՒՄԸ

15731
A 3282

(Զրույցներ բանվորների հետ)

Կազմեց՝ Պ. Չերգանցեվ

Թեմատիկ խմբակները
աշխատանքի ծրագիր
և նյութերի

ՀՐԱՅՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ԿԱՌՈՒՑՈՂ ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԱՐԶՄՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ

ԿԵՆՏՐԱԼԻԶԱՑԻԱ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ № 2

ԱԶՈՐԱԿԱՆ

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ 2-րդ ՏԳԱՐԱՆ
ՊԱՏՎԵՐ 1238 ՏԻՐԱԺ 1000
ԳՐԱՌԵՊԳԼԽՎԱՐ 1645 (Բ)

ՅԵՐԵՎԱՆ - 1929 թ.

ՀԱՄԱԶԱՅՆԵՅՐԱԾ Ե (ՀԿԿԲ)-ԿԿ
ԱԳԻՏՊՐՈՊԲԱԺՆԻ ՀԵՏ

ԶՐՈՒՅՑ ԱՌԱՋԻՆ

ԻՆՉ Ե ԿՈԼԼԵԿՏԻՎ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ
ԻՆՉ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԻ ՆԱ ՍՈՑԻԱ-
ԼԻՍՏԱԿԱՆ ԾԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Զրույցի նպատակն է պարզել գյուղատնտեսությունը կոլլեկտիվ ձևով վարելու առավելությունները և ոգտավետությունը տնտեսական և մանր գյուղական տնտեսություն համեմատությամբ և ցույց տալ, վոր գյուղացիության հիմնական մասայի համար գյուղական տնտեսության սոցիալիստական վերակառուցման միակ ճանապարհը մանր, բաժան-բաժան տնտեսությունից

խոշոր կոլլեկտիվ տնտեսությանն անց-
նելն է:

Հիմնական հարցերը, վորոնց վրա գլը-
խավորապես պետք է կենտրոնացնել ուն-
կընդիրների ուշադրությունը, հետեյալներն
են՝

1) Դյուղական տնտեսության բարվո-
քումը կախված է հողն ուղիղ ձևով ոգ-
տագործելուց, տնտեսությունը կանոնավոր
կազմակերպելուց, լինվենտարը խելացի և
հաշվոր գործադրելուց, բանվորական ձեռ-
քերից և այլն, մի բան, վոր հնարավոր է
հաջող կերպով կիրառել միմիայն խոշոր
տնտեսության մեջ:

2) Անհատական խոշոր տնտեսությունը
տանուծ է դեպի կոլլեկտիվություն և քայ-
քայում գյուղացիության հիմնական մաս-
սային (չքավորության և միջակներին):

Իսկ խոշոր կոլլեկտիվ տնտեսություն-
ները ապահովում են գյուղական տնտեսու-
թյան բարգավաճումը, նրա տված յեկա-
մուտի աճումը և սոցիալիստական վերա-
կառուցումը:

Այդ պատճառով խոշոր կոլլեկտիվ տնտեսություններ հիմնելը համապատասխանում է և՛ գյուղացիության շահերին յե՛ւ սոցիալիստական շինարարության նպատակին:

ԶՐՈՒՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

1. Խոշոր և մանր տնտեսությունների դերը գյուղական տնտեսության մեջ:

2. Խոշոր տնտեսություններ առաջապուլու յերկու ճանապարհ:

3. Գյուղական տնտեսության զարգացման ի՞նչ ճանապարհ է մատնանշել Լենինը:

4. Ի՞նչ է կոլլեկտիվ տնտեսությունը:

5. Ընկերությունների ոգուտները:

6. Սրտեղների ոգուտները:

7. Կոմմունաների ոգուտները:

8. Դասակարգային պայքարը գյուղում և կոլլեկտիվ տնտեսություններ հիմնելու գծվարությունները:

9. Ի՞նչ նշանակություն ունեն կոլլեկտիվ տնտեսությունները գյուղի սոցիալիստական շինարարության համար:

ԶԻՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱՌՈՒԹՈՒՆԸ

Խոսքս յեմ մանր ճշեհսություն:

Դյաւղական մանր տնտեսութեան մեջ դժվար ե վորեւ բարվոքում մտցնել: Լավ ձի, ազնվացեղ կով, մեքենա դնելու համար չքավոր ե միջակ գյուղացին միջոցներ չեն ունենում:

Իսկ յեթե վորեւ ե չքավոր գյուղաց առնում ել ե մի ձի, ապա, դժվարութեամբ ե կարողանում պահել, վորովհետեւ ամեն տնտեսութեուն չի կարող ձի կերակրել: Շատ տնտեսութեունների համար ձի ունենալը ուղակի վնաս ե:

Նույնպես ել մեքենան: Թանգ արժե ե մանր տնտեսութեան մեջ մեքենայի համար քիչ աշխատանք կա, արած ծախսը չի արդարացնում: Հանքային պարարտացումը միջակ գյուղացու համար թանգ ե, իսկ իր ունեցած կենդանիների աղբը քիչ ե:

Մանր տնտեսութեան մեջ չի կարելի գործադրել վոչ լավ պարարտացում, վոչ ել լավ մեքենաներ: Չի կարելի բարելավել

նաև հողի մշակումը: Մանր տնտեսությունը քիչ բերք է տալիս: Յորեն, յուզ, կաթ և ուրիշ մթերքներ շատ քիչ կարելի չէ ծախել: Դրանով տնտեսությունը ամրապնդել չի կարելի: Շատ հաճախ ել մանր տնտեսության տված մթերքները հազիվ են բավականացնում տնտեսությանն իրեն:

Իսկ մեծ տնտեսության մեջ հնարավորություն կա ունենալ լավ կենդանիներ, ձի, կատարելագործված մեքենաներ, արականոր և այլն:

Կարելի չէ կիրառել արհեստական պարատացում. բացի դրանից, կենդանիների աղքեն ել շատ է:

Մեքենաներով լավ մշակված հողը լավ բերք է տալիս: Տնտեսությունն ավելի չէ զորեղանում: Խոշոր տնտեսությունը հնարավորություն ունի մեծ քանակությամբ մթերքներ վաճառել և աստիճանաբար ավելի ու ավելի զորեղանալ:

Այն ժամանակ, յերբ փոքր տնտեսության համար տեխնիկական կուլտուրաները

(կտաւփատ, կանեփ և այլն) շահավետ չեն, խոշոր տնտեսութեան մեջ նրանք ոգուտ են քերուած: Խոշոր տնտեսութեանը կարող ե տեխնիկական կուլտուրաները վերամշակել տեղուծ և վաճառել արդեն պատրաստ դրութեամբ: Յեւ այդպէս, վոր կողմից ել վոր մոտենալու լինենք, խոշոր տնտեսութեանն ավելի շահավետ ե և ավելի արդյունավետ, քան գյուղական մանր տնտեսութեանը:

Մեր ամբողջ տնտեսութեան համար ել խոշոր կոլլեկտիվ տնտեսութեանները նույնպէս ձեռնտու յեն, քան՝ մանրները:

Արդյունադործութեան համար հարկավոր ե կտաւփատ, կանեփ և այլ տեխնիկական կուլտուրաներ: Տեխնիկական կուլտուրաների գլխավոր արտադրողը խոշոր տնտեսութեանն ե: Արդյունադործութեանը հարկավոր ե հաց. հացի գլխավոր արտադրողը նույնպէս խոշոր տնտեսութեանն ե:

Հացաձեռման անցյալ տարվա անբավարար լինելու պատճառներից մեկը հենց

այն հանգամանքն է, վոր հացի գլխավոր արտադրողը մանր տնտեսություններն են, վորոնք բերքի բավական խոշոր մասը գործադրում են իրենց սեփական տնտեսության համար և շուկա քիչ են հանում:

Խոցոր օնոեսություններ հիմնելու յերկու Ձա-
ճապարհ

Նույն հացամթերման որինակով մենք տեսանք, վոր խորհրդային և կոլլեկտիվ խոշոր տնտեսությունները իրենց հացի ավելցուկը վաճառեցին պետությանը, իսկ խոշոր անհատական (կուլակային) տնտեսությունները հացի ավելցուկը թաղցրեցին, հույս ունենալով դրանով բարձրացնել հացի գինը, հացի չարաշահությամբ հարստանալ և հացամթերումը անհաջողության մատնելու միջոցով, դժվարացնել ԽՍՀՄ սոցիալիստական շինարարաբու-
թյունը:

Հացամթերումների որինակը պարզ կերպով ցույց է տալիս, վոր խոշոր անհատական տնտեսությունը սոցիալիստական

շինարարութեան գործի համար խոչնդոտ
ե, իսկ խոշոր հասարակական տնտեսու-
թյունը (խորհրդային տնտեսութիւն, կոլ-
լեկտիվ տնտեսութիւն)՝ նրա ռզնականն ե:

Հիշեցեք, վոր ցարական Ռուսաստա-
նում խոշոր տնտեսութիւն ունեյին միայն
կալվածատերերը և կուլակները: Նրանք ի-
րենց բարեկեցութիւնը հիմնում եյին վար-
ձու բանվորներին և շրջակայքի գյուղա-
ցիութեանը չարաչար շահագործելու վրա:
Նրանք մեծանում և հարստանում եյին
նաե չքավորների հողերը գնելու և ճորտա-
ցնող վարձակալութեան միջոցով: Իսկ նույն
այդ ժամանակ տասնյակ միլիոնավոր գյու-
ղացի ընտանիքներ փոքրիկ պատառ հողի
վրա թողուկային տնտեսութիւններ եյին
հիմնում և քարշ տալիս իրենց կիսաքաղց
գոյութիւնը: Շուկայում նրանք չեյին կա-
րողանում մրցել խոշոր տնտեսութիւններին
հետ:

Կապիտալիզմի ժամանակ գյուղական
տնտեսութիւնը զարգանում ե մի կողմից

մի փոքր խումբ հարուստների և կալվածատերերի ձեռքում գտնված խոշոր, կուլակային տնտեսություններ առաջանալու և զորեղանալու, մյուս կողմից՝ մանր տնտեսությունների տեր գյուղացիության հիմնական մասայի աստիճանաբար աղքատանալու միջոցով: Գյուղական տնտեսություններից ավելի ունեվոր տնտեսությունները դառնում ենին կուլակային, իսկ ավելի անզոր տնտեսությունները՝ չքավորական: Չքավորությունը զնալով ավելի ու ավելի մեծ թվով հողագործի եր դառնում, միույն եր առանց վար ու ցանքսի և դառնում եր բատրակ, կամ թե աժան բանվորական ուժ եր մատակարարում քաղաքին:

Յեթե ԽՍՀՄ աճեյին խոշոր անհատական տնտեսությունները, այդ կնշանակեր, վոր գյուղում նույն շերտավորումն ե առաջանում, ինչ վոր ցարիզմի ժամանակ եր: Կնշանակեր, վոր գյուղական մասսան ավելի աղքատանալու յե: Սոցիալիստական շինարարությունը անհնարին կլիներ: Խոշոր

անհատական տնտեսություններ գոյանալու
ճանապարհը կապիտալիստական ճանապարհն
է։ Յեւ վայն գյուղացին, վոր ձգտում է
խոշոր անհատական տնտեսություն ստեղ-
ծելու, ոժանդակում է գյուղում կապիտա-
լիստական սկզբունքների ամրապնդման։
Գյուղացիական հիմնական մասսայի հա-
մար այդպիսի գյուղացին ուղեկից չէ,
այլ նրա թշնամին է։ Այդ, ի հարկե, չի
նշանակում, վոր մենք դեմ ենք մանր
անհատական տնտեսությունների ընդհանուր
բարձրացման, նրանց վերելքին։ Ընդհակառա-
կը, նման տնտեսությունների վերելքը հան-
դիսանում է կուսակցության և խորհրդային
իշխանության հիմնական նպատակներից մե-
կը։ Սակայն, գյուղական մանր տնտեսություն-
ների համար սոցիալիզմի անցնելու վերջնա-
կան լուծը կուլեկտիվիզմի ուղին է։

Հոկտեմբերյան հեղափոխությունը գյու-
ղացիությանը հնարավորություն տվեց ա-
ռաջ կերպով բարձրացնելու իր գյուղական
տնտեսությունը և զարգացնելու այն սո-

ցիալիստական ուղիով (կոոպերացում, կու-
լեկտիվացում): Կուլակային վերնախավը,
հողի ազգայնացման հետևանքով, կորցրեց
գյուղական մասնային ճորտացնելու իր
հիմնական զենքը՝ հողի սեփականությունը:

Պետական առգյունագործությունն ա-
ջակցում է գյուղական տնտեսության բարձ-
րացման, տալով գյուղին այն ամենը, ինչ
վոր անհրաժեշտ է նրան (մեքենաներ, մա-
նուֆակտուրա և այլն), անշեղ կերպով իջե-
ցնում է գները, ավելացնում է բաց թողած
ապրանքների քանակը, բարձրացնում է նրա
հատկությունը և, վերջապես, նպաստում է
ամբողջ գյուղական տնտեսության վերա-
կառուցմանը՝ պայմանագրության և այլ մի-
ջոցներով:

Պրոլետարական իշխանության քաղա-
քականությունը (բատրակության կազմա-
կերպում, ոժանդակություն չքավորության,
չքավորությանը վարկ տալը, միջակի հետ
դաշինքը, կուլակությունը հարկերով ճնշելը,
գյուղական լայն մասսաների կոոպերացումը,

ոժանդակություն կուլեկտիվ տնտեսություններին և այլն) ամբողջապես ուղղված է, փորպեսզի՝ հասնելով գյուղական տնտեսություններին ընդհանուր բարձրացման, ամբողջ գյուղական տնտեսությունը ուղղվի դեպի սոցիալիստական ճանապարհ, վճռականորեն վոչնչացնելով գյուղի կուլակային վերնախավի աճումը և ազդեցությունը:

Խորհրդային իշխանությունը խոշոր կուլեկտիվ տնտեսության առավելությունները գյուղացիությանը ցույց է տալիս շոշափելի որինակներով: Այսպիսի որինակ հանդիսանում են խորհրդային տնտեսությունները: Խորհրդային տնտեսությունները, կուլեկտիվ տնտեսության անցնելու խնդրում, գյուղացիության համար, բառիս իսկական իմաստով, ուսուցիչ են հանդիսանում:

Այդ տեսակետից ցայտուն որինակ է Շեվչենկոյի անվան խորհրդային տնտեսությունն Ուկրաինայում: Այդ տնտեսությունը, բերքի մի չորրորդ մասն ստանալու պայմանով, հանձն է առնում տրակտորներ-

րով մշակել շրջակայքի գյուղերի հողերը, հավաքել և ծեծել բերքը: Հողամեջերի բոլոր սահմանները քանդվեցին, իսկ բերքը ծեծելուց հետո, բաժանվեց: Գյուղերը, ըստ սահմանված ցուցակի, բանվորներ էյին տալիս: Պալղվեց, վոր դաշտերը լավ մշակելու շնորհիվ գյուղացիներին ստացած բերքը սովորականից այնքան բարձր եր, վոր խորհրդային անտեսությունը հասանելիք հացահատիկը տալուց հետո անգամ, գյուղացիությանն ավելի հաց մնաց, քան ստանում էյին նրանք սովորաբար, յերբ ամեն մեկն առանձին ինքն եր իր դաշտը մշակում:

Դրանից հետո շրջակայքի գյուղացիներին մեջ հողի հասարակական մշակման ձգտումն այլքան մեծացավ, վոր խորհրդային տնտեսությունը 100-ից ավելի վերստ հեռավորության վրա գտնվող գյուղերից դիմում եր ստանում տրակտորներ ուղարկել իրենց մոտ և հողի հասարակական վարանել:

Յեթե հողի հասարակական վարը և բերքի հասարակական հավաքումը այդպիսի ձեռնտու յե, ապա միանալով խոշոր, կոլեկտիվ տնտեսություն հիմնելը շատ ավելի ձեռնտու յե, մանավանդ, վոր կոլեկտիվ տնտեսությունները իրենց հում նյութը վերամշակելու համար կազմակերպում են, որինակ, յուղահան գործարաններ և այլն, և կոլեկտիվ կերպով վաճառում մթերքներն ու կոլեկտիվ կերպով գնում բոլոր անհրաժեշտ նյութերը:

Կոլեկտիվ տնտեսություններ հիմնելը անհրաժեշտ ե թե գյուղացիությանն իրեն և թե ամբողջ ժողովրդական տնտեսության սոցիալիստական շինարարության համար:

Լեւոնը՝ գյուղական օմեհսուքյան կոլեկտիվացման մասին

Գյուղացիները հաճախ զանգատվում են, վոր իրենք բանվորներից վատ են աչրում: Բանվորները աշխատում են 3 ժամ, նույնիսկ 5 ժամ, իսկ մենք այդ մասին

յերազել անգամ չենք կտրող, -- ասում են
նրանք: Գյուղացիների շատ աշխատելու
պատճառը գյուղական տնտեսութեան բա-
ժան բաժան լինելն է և նրա հետամնացու-
թյունը: Գյուղական տնտեսությունը նման
է քաղաքի արհեստավորի կամ տնայնագոր-
ծի մանր արտադրութեան: Տնայնագործը
նույնպէս աշխատում է զիշեր ու ցերեկ
անընդհատ, բայց գործարանին հավասար-
վել չի կարողանում: Գործարանում մեքե-
նաներ կան, աշխատանքը լավ է կազմա-
կերպված, վառելիքը, հում նյութը կա-
նոնավոր ձևով է ոգտագործվում: Գործա-
րանային բանվորի ուժը նրա մեջ է, վոր
նրա աշխատանքը կազմակերպված է, հա-
սարակակայնացրած է, միավորված:

Գյուղացիությունը նույնպէս օւետք է
տնտեսական միավորման, կոոպերացիայի
ճանապարհով գնա: Վլադիմիր Իլիչ Լենինը
դեռ 1918 թվին, կոմսոլեաների համա-
գումարում ասաց՝ «ասլրել հին ձևով, ինչ-
պէս ասլրում էյինք պատերազմից առաջ,

չի կարելի, նմանապես չի կարող շարունակ-
վել ուժերի և աշխատանքի այնպիսի կո-
դուպուտ, ինչպիսին տեղի ունի մանր ու
առանձին տնտեսություններում: Աշխա-
տանքի արտադրողականությունը կրկնակի
ու յետակի կրարծրանա, մարդկային աշխա-
տանքը հողագործություն համար կրկնակի ու
յետակի կիմնայվի, յեթե քաժան-քաժան մանր
տնտեսություններից հասարակականացրած
տնտեսության անցնելը իրագործվի»:

Լենինը գրել է՝ «Մեկ վոր պետական
իշխանությունը բանվոր դասակարգի ձեռ-
քում է, մեկ վոր այդ պետական իշխանու-
թյանն է պատկանում արտադրության բո-
լոր միջոցները, մեզ մոտ, իսկապես, միայն
մնացել է ազդաբնակությունը կոոպերա-
ցնելու խնդիրը»:

Զբաղոր և միջակ դյուղացիությունն
տրդեն իրագործում է Իլիչի պատգամը:
Զանազան տեսակի կոոպերատիվներում՝
վարկային ընկերություններում, մթերքնե-
րը վաճառելու ընկերություններում, կաթ,

գետնախնձոր մշակող մեքենայական ընկերություններում և արտեղներում միացած են $7\frac{1}{2}$ միլյոն գյուղացիական տնտեսություններ (ՆՍՀՄ՝ ամբողջ գյուղական տնտեսությունների $\frac{1}{3}$)։ Բոլոր այդ կոոպերատիվ միավորումները այն ուղին ե վորով պետք ե գյուղը սոցիալիստական վերակառուցման յենթարկվի։

Խճ, ե կոլեկտիվ ռեզնուքյուեք

Բայց կոոպերացիայի ճանապարհով ավելի վճռական կերպով գնում են այն գյուղացիները, վորոնք միանում են և կոլլեկտիվ տնտեսություններ են հիմնում։ Կոլլեկտիվ տնտեսություններում գյուղացիները վոչ միայն միասին ծախում, առնում կամ վերամշակում են բերքը, այլև միասին մշակում են հողը, միասին հավաքում բերքը։

Կոլլեկտիվ տնտեսությունները լինում են յերեք տեսակ՝ ընկերություններ, արտեղներ և, վերջապես, կոմմունաներ։

Ընկերությունները միավորում են

գյուղացիներին միայն մեկ վորև ե տնտեսական աշխատանքի համար, որինակ, միասին հող վարելու, միասին տրակտոր, կալսիչ մեքենա ոգտագործելու և այլն: Ընկերություններում ընդհանուր են դառնում միայն հողամասերը և գյուղատնտեսական մեծ մեքենաները: Իսկ գյուղացիների մնացյալ ժամողջ գույքը՝ բանվոր անասունները, մանր գյուղատնտեսական գործիքները, շենքերը, տնային կայքը, այդ բոլորը ամեն մեկին իրենն է:

Արտելը միավորում է գյուղացիներին գյուղական տնտեսության բոլոր հիմնական աշխատանքների համար: Արտելում վոչ միայն միասին վարում են հողը, այլ և բերքը միասին են հավաքում, և բերքը միասին վերաձշակում: Արտելներում ընդհանուր են դառնում վոչ միայն հողամասերը և այս կամ այն գյուղատնտեսական մեքենաները, այլ և բոլոր գյուղատնտեսական գործիքները, ժամողջ բանվոր անասունները: Անհատական ոգտագործման մնում է միայն

այն, ինչ վոր կապված է տնային տնտե-
սության հետ, այն է՝ կովերը, վոչխարները,
այծերը, խոզերը, շենքերը և այլն: Տնային
տնտեսությունը ամեն մեկին իրենն է:

Կոմմունաներում գյուղացիները ինք-
նակամ կերպով միավորում են իրենց ամ-
բողջ կայքը՝ բանվոր անասունները և գյու-
ղատնտեսական գործիքները, շենքերը և
տնային գույքը: Անհատական ոգտագործ-
ման համար մնում է միայն անձնական գոր-
ծածության առարկաները, ինչպես որինակ՝
հագուստը, վոտնամանը և այլն:

Ընկերությունը միասին հողագործա-
կան աշխատանքներ կատարելու միավորման
ամենապարզ ձևն է, արտելը՝ ավելի լրիվ
միավորում է, իսկ կոմմունան ամենակա-
տարյալ միավորման ձևն է:

Կոմմունան գյուղական տնտեսության
խոշոր ձեռնարկությունն է, ինչպես Փաբլի-
կան, գործաբանք՝ քաղաքում կամ խորհրդա-
յին տնտեսությունը՝ գյուղում: Կոմմունան
վոչ միայն ամբապնդում է գյուղական

տնտեսությունը, այլ և հողագործության մեջ մեքենաների լայն գործադրություն և մտցնում: Նա հնարավորություն է ստեղծում գյուղում կազմակերպված, պլանային արտադրություն հիմնելու քաղաքի խորհրդային տնտեսության որինակով:

ԸՆԿԵՐՈՒՅՈՒՄ ՈՓՈԼՈՑՆԵՐ

Վերցնենք մի քանի որինակ: Միա միտսին հող մշակելու մի ընկերություն:

Շատ տեղում գյուղական տնտեսությունների հարյուրից ինսունի հողերը կազմված են 20-50 մանր կտորներից: Միևնույն գյուղացու հողը ցրված է զանազան տեղերում և ամեն մի կտորի լայնքը մեկ սաժենից քիչ ավել է: Մեկ կտորից մյուսն անցնելու համար գյուղացին ահագին ուժ և ժամանակ է գործադրում: Հողամիջերի ահմաններում բավական հող է զուր կորչում: Սամարայի նահանգում (ըստ հաշիվների) շնորհիվ հողամասերի ցիրուցան լինելու, մեկ կտորից մյուսը գնալ-գալու հա-

մար ամեն մի տնտեսություն ավելի քան
հազար վերստ ճանապարհ ե կտրոււմ: Գնա
գալու արժեքը նստում ե տնտեսութեանը,
57 բուրլի: Հաշված ե, վոր ցիրուցանութեան
շնորհիւ միջասանմաններում հարուր դեսյա-
տինից յոթ դեսատին հող զուր կորչում ե:
Մեկ դեսատինից 40 փութ բերք ստանալու
գեպքում, սանմաների շնորհիւ յուրաքան-
չյուր հարյուր դեսյատին հողից 280 փութ
հաց ե կորչում, իսկ ամբողջ Պորնդա-
յին Միութեան մեջ կորչում ե 10 միլիոն
դեսատին հող, կամ 400 միլիոն փութ հաց:

Միջասանմաններում բուսած անպետք
խոտերը կեղտոտում են հողը և հսկայական
փոսս են հասցնում: Նեղ շերտերը չի կա-
րելի բարելաված ձևով մշակել, չի կարելի
խոտորնակի վարել, ցանոդ մեքենա գործա-
ծել:

Ընկերութեանները միացնում են մեկ-
յերկու տասնյակ գյուղական ընտանիքների
հողաբաժինները, վորպես մեկ հողամաս: Մի-
ջասանմաններում հողը չի կորչում: Հողը

և ագարակը մոտիկ են: Հեշտ և անպետք խոտերը արմատահան անելը, դաշտերը չորացնելը կամ ջրելը, ամրացնել փոսերը, բարելավել հողի մշակությունը, գործադրել մեքենաներ: Տնտեսության բերքը և յեկամուտը նշանավոր չափով ավելի կլինի:

Վերցնենք մեքենայական մի ընկերություն: Տնտեսությունը անհատական և, փոքր, իսկ մեքենան, որինակ, շարքացանը, կարող և տարեկան ցանել 60-70 դեսյատին: Անհատ հողատերը տասը դեսյատին հող ել չունի: Շարքացանը ամեն մեկ դեսյատինին առնվազը յերեք փութ սերմ տնտեսում և: Լրիվ ծանրաբեռնվածության դեպքում նա կարող և տարեկան 400-ից մինչև 500 փութ ավելորդ հաց տալ, այսինք մեկ տարում իր գինը հանել: Իսկ անհատ հողատիրոջը շարքացանը անմաչելի յե և ձեռնաու չե: Ցանող մեքենան լրիվ ծանրաբեռնել, ուրեմն յեվ նրա ըուրր առավելություններից ոգտվել կարող և միայն մեքենայական ընկերությունը:

Խրձակապ մեքենան մեկ որում, մեկ բանվորով և 3-4 ձիով, կարող է հնձել և կապել մինչև 4-5 դեայատին ցորեն։ Սեզոնում խրձակապ մեքենան կարող է հնձել 60-ից մինչև 80 դեայաաին ցորեն։ Նշանակում է, անհատական գյուղացիական տընտեսության համար խրձակապ մեքենան համարյա վոչինչ չի անում և միայն ընկերությանն և ոգտակար։

Ձիով բանող կալսիչ մեքենան կարող է կալսել որեկան 30-ից մինչև 70 դեզ ցորեն, հաշվելով դեզում 5 սայլ, ամեն սայլը 15 փութ։ Իսկ շողիով բանող կալսիչ մեքենան կարող է կալսել 30-ից մինչև 100 դեզ։

Նախկին Կազանի նահանգի, Կոզմոդեմյանովսկի գավառի Բոլոնիխ գյուղում 35 գյուղացիներ տարեկան հավաքում էյին մոտավորապես 1050 դեզ բերք։ Շղթաներով ձեծելիս նրանք աշնանը գործադրում էյին մոտ 500 բանվորական օր։ Կալսելը նրանց արժենում էր մոտ 300 ռուբլի։ Ձիով աշխատող կալսիչ մեքենային գյուղացիները

վճարել են վոսկու հաշվով 250 ուռլի: Մե-
քենան կարող է աշխատել 15-20 տա-
րի:

8 բանվոր և 4 ձի աշխատելով, ցորե-
նի կալսերը արժենում է տարեկան 125-130
ուռլի, այսինքն $2\frac{1}{2}$ անգամ սլակաս, քան
ձեռքով կալսելիս:

Փոքր տնտեսության մեջ այդպիսի
մեքենան վնասարեւր կլինի: Իսկ խոշոր ըն-
կերության տնտեսության մեջ նրա ոգու-
տը շատ մեծ է:

Դյուղատնտեսական բոլոր մեքենաները
միատեղ գործածելիս տնտեսվում է մարդ-
կային աշխատանքը, այդ աշխատանքն ավե-
լի արտադրողական է դառնում, աժանա-
նում են դյուղատնտեսական արտադրու-
թյան մթերքները և լավանում է նրանց
հասկությունը:

Արեւիկի ոգուեցները

Արտելներ հիմնելը դյուղացիներին
ավելի մեծ ոգուտ է տալիս, քան ընկե-

բություններ հիմնելը: Բոլոր այն ոգու-
ները, վոր ունեն ընկերությունները, ամ-
բողջապես ունեն նաև արտելները, բայցի
գրանցից, արտելները կրճատուած են բան-
վոր անասունների, ինվենտարի ծախքերը:
22 հեկտար (20 դեսյատին) հողի արտելին
բաժական ե 2 ձի, 2 գութան, 2 սայլ: Իսկ
յեթե այդ 22 հեկտոր հողը պատկանուած ե
4 անհատական գյուղացիական տնտեսու-
թյունների, ապա յուրաքանչյուրին հարկա-
վոր ե գութան, սայլ, ձի, այսինքն 4 ձի,
4 գութան, 4 սայլ: Ձիերի ծանրաբեռն-
վածությունը անհատական տնտեսություն-
ներում ավելի քիչ կլինի, իսկ կերը ավելի
կերթա:

Չորս մշակը արտելում ավելի հեշտու-
թյամբ կկատարեն բոլոր աշխատանքները,
քան նույն չորս մշակները չորս անհատա-
կան տնտեսություններում: Արտելում աշ-
խատանքը կարելի յե այնպես բաժանել, վոր
աշխատանքի արտադրողականությունը բար-
ձրանա:

Յեթե, սրինակ, անհատական տնտես-
ության մեջ ձին սառտիկ, կամ մշակը
մեռնի, ապա այդ հանգամանքը յերկար
ժամանակ կքայքայի տնտեսությունը: Իսկ
արտելում անասունը կամ աշխատավորը
կորցրած ընտանիքին ողնության կհասնեն:

Արտելային գյուղական տնտեսու-
թյունն արդեն վոչ թե մանր, այլ խոշոր
գյուղական տնտեսություն է: Իրա շնորհիվ
նա յուրաքանչյուր դեսյատինից ավելի ոգուտ
է ստանում, քան անհատական տնտեսու-
թյունը: Այսպես, 150-200 դեսյատին տա-
րածություն ունեցող արտելային տնտեսու-
թյունը դեսյատինից 120 ըուբլուց ավելի
յեկամուտ է ստանում: Իսկ մանր անհա-
տական՝ 5-10 դեսյատին ունեցող տնտե-
սությունը դեսյատինից ստանում է վոչ
ավելի քան 60 ըուբլի:

Կոմսուճայի ոգուսճեքը

Կոմսունա հիմնելն ավելի յեվա ձեռն-
տուլ է, քան արտել հիմնելը: Այն ըլլոր

ոգոււտները, վոր ունեն ընկերությունները
և արտերները, ամբողջապէս ունեն նաև
կոմմունաները: Բացի դրանից, կոմմունա-
ները ունեն նաև մի շարք ուրիշ ոգոււտներ:

20 դեպքատին վարելահող ունեցող կոմ-
մունայի համար մեկ սարայը միանգամայն
բավարար եւ Իսկ յեթե նույն վարելահողը
բաժանված ե չորս անհատական տնտեսու-
թյունների մեջ, ապա կպահանջվի չորս
սարայ: Անհատական գյուղացիական տնտե-
սությունների շենքերը շատ թանգ են ար-
ժենում, որինակ, 60-ից մինչև 100 ռուբլի,
իսկ կոմմունայում՝ միայն 17-20 ռուբլի
մեկ դեպքատին վարելահողին: Գյուղացիա-
կան տնտեսական շենքերը սովորաբար շատ
վատ են լինում: Իսկ կոմմունայում շենքե-
րը կարող են անհամեմատ լավ լինել և
միևնույն ժամանակ՝ դեպքատիներէ հաշվով՝
աժան: Լավ շենքերում հացն ել լավ ե
պահվում, անասուններն ել ավելի յեկա-
մուտ են տալիս: Որինակ, Տամբովի նահան-
գում, Լենինի անվան կոմմունայում կովը

մեկ տարոււմ տվել է 200 փութ կաթ, տա-
աջվա 80 փթի փոխարեն, շնորհիվ այն
բանի, վոր անասունները փոխադրվել են
տվելի տաք, լույս և ոգնան խողովակներ
ունեցող շենքեր:

Կոմսուկայում գյուղական տնտեսու-
թյան մանր ճյուղերն անգամ յեկամտաբեր
են դառնում: Որինակ, Թռչնապահությու-
նը, այգեգործությունը, բանջարաբուծու-
թյունը, մեղվապահությունը, վորովհետե
շահավետ է Թռչնանոց շինելու վրա ծախս
անելը: Նույն Լենինի անվան Կոմսուկայում
ամերիկյան ձևով շինված հավանոցը մեծ
չափով բարձրացրեց տնտեսության յե-
կամուտը:

Կոմսուկայում ընդհանուր խոհանոցը,
լվացքատունը, մանկապարտեզը կարող են
Թեթևացնել կնոջ տան աշխատանքը:

Վերջապես, Կոմսուկայում հեշտ է
կողմնակի շահավետ ձեռնարկություններ
կազմակերպելը, ինչպես, գետնախնձոր քե-
րող գործարան, յուղանան գործարան և

ուրիշները: Այդ կողմնակի ձեռնարկությունները գրադեցնում են աղատ բանվորական ձեռքերը և յեկամուտ են տալիս:

1924 թվին Պենզայի նահանգի կալինինի անվան կոմսոնան ջրաղացից տարեկան 11 387 ռ. յեկամուտ և ստացել: Իսկ անտեսության մյուս բոլոր ճյուղերը (հողագործություն, անասնապահություն, այգեգործություն) ավել են մեկ տարում միայն 5.847 ռուբլի:

Տնտեսությունը ընկերություններով վարելը ավելի ոգտավետ է, քան անհատորեն: Արտելով ավելի ոգտավետ է, քան ընկերություններով, իսկ կոմսոնան ավելի ոգտավետ է, քան արտելը: Վորչափ լրիվ կերպով են միավորում գյուղացիներն իրենց գյուղատնտեսական աշխատանքը, այնչափ ավելի ոգուտ են ստանում նրանք:

Կոլլեկտիվ սեռեսուրյուցների ունեցած քերուրյուցները յեվ գծվարուրյուցները

Սակայն կոլլեկտիվ անտեսություններ-

րը նվաճումների հետ միասին աւնեն նաև
 շատ թերություններ: Գլխավոր թերու-
 թյուններն են՝ աշխատանքի արտադրողա-
 կանության անբավարար լինելը, տնտեսու-
 թյունը ծրագրված կերպով վարելու պա-
 կասությունը: Ապա շատ կոլլեկտիվ տնտե-
 սություններ դեռ ևս չեն անցել բազմա-
 դաշտյան սխտեմին: Որինակ, Հյուսիսային
 Կովկասում բազմադաշտի անցել են գյու-
 ղատնտեսական կոմսունաների 70,9%, ար-
 տելների 42,5% և ընկերությունների
 23,1%-ը: Կոլլեկտիվ տնտեսությունները
 չունեն հաշվապահություն և հաշվառում,
 նկատելի չեն ներքին անհամաձայնություն-
 ներ, կազմի հոսունություն, գյուղատնտե-
 սական կոոպերացիայի հետ կապ չեն պահ-
 պանում (կոլլեկտիվ տնտեսությունների
 համարյա կեսը միշտ մի կոոպերատիվ միա-
 վորման անդամ չեն), թույլ են կապը խոր-
 հրդային տնտեսությունների և շրջապատի
 անհատական գյուղական տնտեսություննե-
 րի հետ և այլն:

Գյուղացին դարերով վարժվել է ապ-
րել մանր անհատական տնտեսությունով և
իր հարեանների հետ մեկ տնտեսություն կազ-
մելը նրա համար դժվար է։ Մարդը մտնում
է կոմսոնայի մեջ, հետո յեթե դուր չի
գալիս՝ հեռանում է։ Կոմսոնան դառնում
է, ինչպես ասում են գյուղացիները, «անց
ու դարձի բակ»։ Ուստի ավելի լավ է
նախ հիմնել հողի հասարակական մշակման,
մեքենայական, արահրոտային և այլ ըն-
կերություններ, յերբ չի պահանջվում ագա-
րակները քանդել։ Ապա, հասարակականա-
ցած միջոցներ կուտակվելուց և տնտեսու-
թյունը մեքենայացման յենթարկելուց հե-
տո՝ անցնել կոլեկտիվների ավելի բարդ
ձևերին՝ արտելի կամ կոմսոնայի։

Գյուղի կուլակային վերնախավը խիստ
ընդդիմություն է ցույց տալիս գյուղի
կոլեկտիվացման, արդելը է հանդիսանում
կոլեկտիվ տնտեսություններ կազմելուն։
Յերբեմն կուլակները նեքս են սողում կազ-
մակերպվող կոմսոնանների մեջ և փորձում

են, արտելի մյուս անդամներին յենթարկել իրենց ազդեցության և կոլլեկտիվ տնտեսությունը դարձնել իրենց հարստանալու միջոց: Դա հաճախ կոլլեկտիվ տնտեսության քայքայման պատճառ ե դառնում: Խորհրդային իշխանությունը վճռական պայքար ե մղում կազմակերպվող կեղծ կոլլեկտիվ տնտեսությունների դեմ: Պետք ե վոր կոլլեկտիվ տնտեսությունների անդամներն իրենք ևս հետեւեն, վորպեսզի կոլլեկտիվ տնտեսությունը չընկնի կուլակի թաթը:

Մյուս ղեկարությունը մեր ընդհանուր տեխնիկական հետաքննարարությունն ե, կոլլեկտիվ տնտեսությունների համար պատրաստված կազմակերպիչների և ղեկավարների պակասը: Գյուղացին չի սովորել մեծ տնտեսություն հիմնել ու կառավարել: Նրան պետք ե այդ բանում ոգնել:

Կոմսոմոլեաները և արտելները լավ են ներանով, վոր տնտեսությունը մեծ ոգուտներ ե ստանում: Նրանց պակասությունն այն ե, վոր գյուղացին դեռ ևս չի վարժ-

վել ամբողջովին հասարակականացրած տըն-
տեսութեան մեջ աշխատել: Այդ պատճա-
ռով կոմսոնաները և արտելները թվակա-
նապես ավելի դանդաղ են զարգանում,
քան կոլլեկտիվ միավորումների պարզ տե-
սակները: Հողի հասարակական մշակման
ընկերութիւնները և մեքանային ընկերու-
թիւններն ավելի հասկանալի յեն և մատ-
չելի գյուղացիութեանը և ուստի թվապես
արագ են զարգանում, քան մյուս ձևերը:
Այդ պատճառով Համամիութենական Կոմ-
սոնիստական Կուսակցութեան Կենտրոնա-
կան Կոմիտեն 1925 թ. հոկտեմբեր ամսում
գյուղում աշխատանք վարելու վերաբերյալ
բանաձևում վորոշեց՝

«Անհրաժեշտ է ուժեղացնել կոլլեկտի-
վացման հասարակ ծեփերի (արտել, մեքե-
նային ընկերութիւններ, ընկերութիւններ
միասին հողը մշակելու, անասունները
միասին ոգտագործելու և այլն) զարգաց-
ման ոժանդակութիւնը, առանձնապես ու-
շառքութիւն դարձնելով այդ ընկերութիւն-

ների մեջ գրավելու թույլ տնտեսութիւն-
ները:

Պետութեան և գյուղատնտեսական կո-
ոպերացիայի կողմից աջակցութիւն ե ցույց
տրվում կոլլեկտիվ տնտեսութիւններին,
ներանց ինվենտար մատակարարելով առաջին
հերթին, արտոնյալ յերկարատե վարկավոր-
ման, հարկերի վերաբերյալ արտոնութիւն-
ներ տալու և այլ միջոցներով: Հասարակա-
կայնացրած տնտեսութիւնն ավելի ոգտա-
վետ ձևով վարելու համար հարկավոր ե
չքաժանվող միջոցներ յեվ կապիտալ կու-
տակել: Համաձայն կոլլեկտիվ տնտեսու-
թիւնների վերաբերյալ յեղած որենքների,
ներանց հանձնված պետական գույքը հա-
մարվում ե անբաժանելի կապիտալ:

Կոլլեկտիվ տնտեսութիւնների մեծակուրյունը

Կոլլեկտիվ տնտեսութիւնները ոգնում
են գյուղացիութեանը անցնելու հողի բա-
բելաված ձևի մշակման, լայն կերպով գործա-
գրելու մեքենաներ, ավելի բերք ստանալու

և ամուր կապեր հաստատելու կոտպերացիայի հետ:

Վորչափ շատ կոլլեկտիվ տնտեսություններ լինեն, այնչափ բարձր, այնչափ բերքատու կլինի մեր ամբողջ գյուղական տնտեսությունը: Վորչափ ամուր լինի կապը կոտպերացիայի հետ, այնչափ հեշտ կլինի գյուղացու համար կազմակերպված ձևով փոխանակելու գյուղատնտեսական հում նյութը արդյունագործական առարկաների հետ:

Կուլակին ձեռնտու չե չքավորի և միջակի միանալը: Կուլակը դեմ ե կոլլեկտիվ տնտեսություններին: Միանալով կոլլեկտիվ տնտեսություններում, չքավորը և միջակը ուժեղանում են: Նրանք կատարելապես ազատագրվում են կուլակի ճորտությունից: Նրանք սովորում են աշխատել համախոհ, մեկ աշխատավորական ընտանիքում: Խորհրդային տնտեսությունների բանվորների որինակով, նրանք մյուս գյուղացիներին ընկերական աշխատանքի որինակ են ցույց տալիս:

Կոլեկտիվ տնտեսությունները ընդհա-
նուր աշխատանքի, բազմադաշտության,
տեխնիկան կուլտուրաների մշակման մի-
ջոցով, իսկ գլխավորը՝ մեքենայի ու տրակ-
տորի միջոցով՝ Խորհրդային իշխանության
ժամանակ չքավորին և միջակին տանում
են դեպի սոցիալիզմ:

Կոլեկտիվ տնտեսությունների բոլոր
տեսակները գյուղացիների կատարյալ ինք-
նակամ միավորումներ են: Խորհրդային իշխա-
նությունը, կոմսունիստական կուսակցու-
թյան ղեկավարությամբ, գործում է միմի-
այն որինակի, ցույց տալու, աջակցության
եւ ոգնության միջոցով: Նա կազմակերպել
է պետական խորշոր հողագործական տնտե-
սություններ, այսպես կոչված «խորհրդա-
յին տնտեսություններ», վորոնք պետք է
գործնականում ցույց տան գյուղացուն
յգյուղական խորշոր տնտեսության առավե-
լությունը բաժան-բաժան գյուղացիական
մանր տնտեսությունների համեմատու-
թյամբ: Ընթացիկ տարում պետական ազատ

հողամասերում նոր խորհրդային տնտեսութ-
յուններ են կազմակերպվում: Բայց տնտե-
սությունների թիվը քիչ է, մոտ 4 հազար:
Խորհրդային իշխանության պայմաներում
խոշոր գյուղական տնտեսությունների ա-
ճումը հնարավոր է, գլխավորապես, ի հա-
շիվ կոլեկտիվ տնտեսությունների աճման,
ի հաշիվ գյուղացիության ինքնակամ միա-
վորման՝ կոլեկտիվ տնտեսություններում:
Իսկ Խորհրդային տնտեսությունները պետք
է գյուղացիների համար դառնան կոլեկտիվ
տնտեսությունների անցնելու ուսուցիչներ:

Յեւ խորհրդային իշխանությունը ո-
ժանդակում է ընկերություններում, ար-
տեղներում և կոմսուններում միավորված
չքավոր և միջակ գյուղացիներին: Տեղա-
կան բոլոր խորհրդային մարմինները պետք
է կոլեկտիվ տնտեսություններին ցույց
տան ամեն տեսակի աջակցություն: Կոլեկ-
տիվ տնտեսությունների գյուղատնտեսական
տուրքը զեղչվում է 25%: Պետությունը
յերկու տարում կենտրոնական գյուղատն.

տեսական բանկի չքավորութեանը վարկա-
փորելու հատուկ ֆոնդին բաց և թողել
մոտ 22 միլիոն ռուբլի: Մյոզ գումարին նշա-
նավոր մասը տված է ընկերութեաններում,
արտելներում և կոմմունաներում միավոր-
ված չքավորներին: Կոլեկտիվ տնտեսու-
թեաններին պետութեանը բաց և թողնում
սերմ, հանքային պարատապում և գյու-
ղատնտեսական մեքենաներ առաջին հեր-
թին: Գյուղատնտեսները պարտավոր են
օգնել կոլեկտիվ տնտեսութեաններին ա-
ռաջին հերթին: Կուսակցութեան 16-րդ հա-
մագումարը վորոշեց ավելի ևս մեծացնել
պետական, կուսակցական և կոոպերատիվ
կադաակերպութեանների կողմից կոլեկտիվ
տնտեսութեաններին ցույց տված աջակ-
ցութեանը:

ՅԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գյուղական տնտեսութեան բարելավու-
մը կախված է, գլխավորապես, հողը ճիշտ
ոգտագերծելուց, տնտեսութեանը ճիշտ ձևով

կաղմակերպելուց, մեքենաները, անասուն-
ները, բանվորական ձեռքերը, պարարտա-
ցումը և այլն խելացի և հաշվով գոր-
ծադրելուց:

Այդ բոլորը անմատչելի յեն ատանձին
մանր տնտեսությանը և շատ հեշտ կերպով
խրականացվող՝ կոլլեկտիվ տնտեսություն-
ներում: Դրա շնորհիվ կոլլեկտիվ տնտեսու-
թյունները անհատական տնտեսություննե-
րից ավելի ոգտավետ են: Գյուղացիական
հիմնական մասսայի համար վերելքի ամե-
նատուղիղ և անշեղ ճանապարհը մանր, բա-
ժան-բաժան տնտեսություններից խոշոր կոլ-
լեկտիվ տնտեսությունների անցնելն է, քան
անհատական տնտեսություններ զարգաց-
նելը: Կոլլեկտիվացումը գյուղի սոցիալիստա-
կան վերափոխման ուղղակի ճանապարհն է:

Կոլլեկտիվ տնտեսությունները միա-
վորելով չքավորներին ու միջակներին, ա-
զատագրում են նրանց կուլակից կախում
ունենալուց և հեշտացնում են հողն ավելի
լավ ձևով մշակելու, տեխնիկական կուլտու-

բաներ ցանելու գործը, հնարավորութիւն
են տալիս ընկերութիւններին, միատեղ աշ-
խատանք գործ դնելու միջոցով, բարդ մե-
քենաներով մշակել իրենց տնտեսութիւնը
և ամրապնդում են գյուղացիութեան ու
կոոպերացիայի մեջ յեղած կապը:

Կոլլեկտիվ տնտեսութիւններին աճելու
փաստը ապահովում է գյուղական տնտե-
սութեան բարձրացումը, ապահովում է, վոր
գյուղին աստիճանաբար իր գյուղական տըն-
տեսութիւնը նոր, սոցիալիստական հի-
մունքների վրա յե դնում:

Յուրաքանչյուր գիտակից քանվոր պետք
է լայն կերպով բացատրի կոլլեկտիվ տնտե-
սութիւնների ոգուտները յեվ նրանց ունեցած
նշանակութիւնը՝ գյուղի սոցիալիստական
շինարարութեան համար,

Ձեռնարկներ ունկնդիրների համար

Լեժներվ-Փինկովսկի—Կոլլեկտիվ տնտե-
սութիւնները (Պետհրատ, գինը 20 կոպ.)

Կինդենվ—Ինչպես անցնել կոլլեկտիվ
տնտեսութեան (Պետհրատ, գինը 10 կոպ.)
էջ 5—22.

Ձեռնարկներ դեկավարների համար

Բացի ունկնդիրների համար հիշած-
ներից, նաև՝

Տայշին—Քաղաքագիտություն (Հրպտ.
«Մոսկովսկի Ռաբոչի», գինը 1 ռուբ.)
եջ 92—93, 102—103, 110.—113.

Կոլլեկտիվ տնտեսությունների համա-
դրումարի բանաձևերը:

ԶՐՈՒՅՑ ՅԵՐԿՐԱՐԴ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ԽՈՐՀԳԱՅԻՆ
ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԻՆՉՊԵՍ ԵՆ ՈԳՆՈՒՄ
ԿՈԼԼԵԿՏԻՎ ՑՆՑԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

ԶՐՈՒՅՑԻ ՆՊԱՏԱԿԸ

Զրույցի նպատակն է պարզաբանել
կուսակցութեան և խորհրդային իշխանու-
թեան վորոշումները կոլլեկտիվ տնտեսու-
թյունների շինարարութեան և նրանց ոժան-
դակելու մասին:

Հիմնական հարցերը, վորոնց վրա հար-
կավոր ե, գլխավորապես, կենտրոնացնել
ունկնդիրների ուղադրությունը, հետևյալն
են՝

1) Անցած տարիների վործը ցույց
տվեց, վոր Լենինի գաղափարը գյուղի սո-
ցիալիստական վերակառուցման մասին՝
կոոպերացիայի միջոցով, և, մասնավորա-

պես, մանր անհատական տնտեսություններից հողի հասարակական մշակման անցնելու մասին՝ չքավորության և միջակներէ կողմից տարեց-տարի ավելի յե կիրառվում կյանքում:

2) Կոլլեկտիվ տնտեսություններն ապացուցեցին իրենց կենսունակությունը:

3) Մանր անհատական տնտեսությունները միավորելու և աշխատավոր գյուղացիության կամավոր համաձայնությամբ խոշոր կոլլեկտիվ տնտեսություններ կազմելու խնդիրը հանդիսանում է գյուղում կուսակցության և խորհրդային իշխանության հիմնական գործնական անելիքը:

4) Կուսակցությունը և խորհրդային իշխանությունը ինչպես ամեն կերպ աջակցում են գյուղացիական տնտեսությունների կոլեկտիվացման գործին:

ՁՐՈՒՅՑԻ ԾՐԱԳԻՐԸ

1) Խնչու կուսակցությունը կոլլեկտիվ տնտեսություններ կազմակերպելը համա-

ըսում ե գյուղում վաճառ աշխատանքի կա-
րևորագույն խնդիրը:

2) Ի՞նչ վիճակի մեջ են կոլլեկտիվ
տնտեսությունները ներկայումս:

3) Ինչպե՞ս ամրապնդել կոլլեկտիվ
տնտեսությունները և բարելավել նրանց
ղեկավարությունը:

4) Ի՞նչ տնտեսական ոգնություն ե
ցույց տալիս կոլլեկտիվ տնտեսություննե-
րին պետությունը:

5) Ի՞նչ աշխատանք պիտի տանեն կոլ-
լեկտիվ տնտեսությունները գյուղական ազ-
գաթնակության մեջ:

ԶՐՈՒՅՑԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոլլեկտիվ տնտեսությունների ներկա դրությունը
յեվ միանց մվաճումները

Կոլլեկտիվ տնտեսությունների շինա-
րարությունը ներկայումս բավական նվա-
ճումներ ե արել: Նախ և առաջ կազմա-
կերպչական և տնտեսական ամրացման
ուղղությամբ, այլև՝ տնտեսության ապ-

ըանքայնությունը մեծացնելու, այսինքն տնտեսութեան մեջ մեծացնելով այն միջերջ-ների արտադրությունը, վորոնք կոլլեկտիվ տնտեսությունը կարող է վաճառել շուկայում: Կոլլեկտիվ տնտեսութեան բերքը, անտարակույս է, վոր ավելի բարձր է, քան անհատական գյուղացիական տնտեսութեան:

Կոլլեկտիվ տնտեսությունների մրցությունը ցույց տվեց նրանց ունեցած նշանակալից նվաճումները:

Վորպես որինակ, կարելի յէ վերցնել «Ուղիղ ճանապարհ» կոլլեկտիվ տնտեսությունը (Սիբիր, Նովոսիբիրսկի շրջանում):

1921 թվից մինչև 1927 թ. մեկ դե-սյատին ցորենի բերքն այնտեղ 40 փթից բարձրացել է 110 փթի, վարսակի բերքը՝ 50-ից բարձրացել է մինչև 130 փթի. կովի տարեկան միջին կիթը 48 փթից հասել է մինչև 130 փթի, խոզի կենդանի քաշը 4 փթից բարձրացել է մինչև 14 փթի:

Ստալինգրադի նահանգի «Ամրություն» կոլլեկտիվ տնտեսութեան բերքը հասել է

120 փթի այն ժամանակ, յերբ գյուղացիական տնտեսության մեկ դեսյատինը տալիս է ընդամենը 60 փութ:

Հենինգրադի շրջանի «Կուդրովո» կոլլեկտիվ տնտեսությունը մեկ դեսյատինից ստանում է 200 փութ հաճար, իսկ գյուղացիական տնտեսությունը ստանում է 25 փութ:

Լավ տնտեսություններում կովի կաթն էլ առատանում է: Սմոլենսկի նահանգի «Դարգե» կոլլեկտիվ տնտեսությունը տարեկան ստանում է միջին հաշվով 305 փութ կաթ, իսկ տեղական գյուղացիական տնտեսությունները ստանում են 60 փութ:

Այդ կոլլեկտիվ տնտեսությունների ստացած բարձր յեկամուտը ամենևին հետևանք չէ վարձու բանվորական ուժը շահագործելու: Լավ կոլլեկտիվ տնտեսություններում աննշան վարձու բանվորական ուժ է գործադրվում:

Կոլլեկտիվ տնտեսություններում, արնատեսություններն ուղիղ կազմակերպելու

դեպքում, արդեն ուժեղ կերպով հրապարակ են դալիս և հիմնական դեր են խաղում խոշոր ձեռնարկության առավելությունները:

Լավագույն կոլլեկտիվ անտեսություններում մենք տեսնում ենք, վոր անտեսության բոլոր ճյուղերում բարձր և արտագրության տեխնիկան: Նրանք ունեն ուղիղ ձևով դրված բազմադաշտյան սերմաշրջանառություն, նշանավոր տուեռսով թանկագին կուլտուրաներ են ցանում, բարելավում են հողի մշակումը, պարարտացնում են, մաքուր տեսակի շարքացան են անում, խոտացանի և արմատապտուղներ ցանելու միջոցով անասնաբուժությունը տանում են ուղիղ ձևով, կազմակերպում են գյուղատնտեսական մթերքների վերամշակման փառակ ձեռնարկություններ:

Նրանց մեջ կիրառվում և անտեսության մասնագիտացում և պահպանվում և անտեսության հիմնական նպատակը:

Յոշոր անտեսությունների անտեսա-

կան ամբաստանողները մեծ չափով նպաստում
է այն հանգամանքը, վոր նրանք հնարավո-
րություն ունեն գյուղատնտեսական ուժ
ունենալու, այսինքն կարող են ունենալ
մասնագետներ, վորոնք գիտականորեն կը-
կազմակերպեն նրանց անտեսությունը:

Հավագույն կոլլեկտիվ անտեսություն-
ները չեն սահմանափակվում միմիայն ի-
րենց անտեսություններով: Նրանք նշանա-
վոր չափով ոգնություն են ցույց տալիս
(տեսակավոր և ցեղական նյութերով, գոր-
ծիքներով, սերմը պտելու և այլն), այլ և
կազմակերպչական ու յերկրագործական ազ-
դեցություն են ունենում իրենց շրջապա-
տող գյուղացիական չքավոր և միջակ խա-
վերի վրա: Առաջավոր կոլլեկտիվ անտեսու-
թյունների ազդեցության տակ, նրանց
շուրջը սկսում են կազմակերպվել նոր կոլ-
լեկտիվ անտեսություններ: Այդ լավագույն
կոլլեկտիվ անտեսությունը իր մեջ նոր ու
նոր անդամներ ընդունելով, սկսում է կազ-
մակերպել նոր միավորումներ (կապերով,

Ուկրաինա՝ Բրատինսկայա, Կոլոսո II, Լե-
նինյան շրջանի և այլն)։

Ստորև բերած աղյուսակը ցույց է
տալիս տարբեր շրջանների կոլլեկտիվ տըն-
տեսությունների և գյուղական տնտեսու-
թյունների յեկամտարերության համեմա-
տությունը՝

ՆԱՀԱՆԳՆԵՐ ՅԵՎ ՇՐՋԱՆՆԵՐ	1 դեռ. ցանք.		1 բանվոր	
	կոմիտե նա	Գյուղա- ցիական տնտես.	կոմիտե նա	Գյուղա- ցիական տնտես.
Պենզայի	71	74	138	94
Հյուսիսային-Կովկաս .	84	48	383	174

Կոլլեկտիվ տնտեսություններն ավելի
չափա մեքենաներ են գործադրում, քան ան-
հատական գյուղացիական տնտեսություն-
ները։ ԽՍՀՄ Կոլլեկտիվ տնտեսություննե-
րում աշխատում են 2000-ից ավելի ոժան-
գակ արդյունագործական ձեռնարկություն-
ներ, վորոնք կազմակերպված են, գլխավո-
րապես, կոլլեկտիվ տնտեսությունների ի-

ըննց ուժեղով: Կոլլեկտիվ տնտեսությունները մեկ տարում շուկա յեն հանում մինչև 30 միլիոն փութ հացահատիկ: Կոլլեկտիվ տնտեսությունները ունեն նաև մի շարք ուրիշ տնտեսական նվաճումներ:

Կոլլեկտիվ տնտեսությունների թիվը տարեց-տարի աճում է: 1918 թվին կային ընդամենը 1,500 կոլլեկտիվ տնտեսություններ: 1923 թվին կային ընդամենը 12.000-ամեն տեսակի կոլլեկտիվ տնտեսություններ (արտեյներ, կոմմունաներ և այլն), վոր միավորում էյին 120.000 տնտեսություն: 1927 թվին կային 18.000-ամեն տեսակի կոլլեկտիվ տնտեսություններ, միավորելով 160.000 տնտեսություն: 1928 թվի սկզբին կային ավելի քան 20.500 կոլլեկտիվ տնտեսություններ, իսկ 1928 թ. ապրիլ 15-ին կոլլեկտիվ տնտեսությունները թիվը բարձրացավ 44⁰/₁₀-ով, այսինքն համարյա կեսով:

Գյուղատնտեսական պարզ կոլլեկտիվները և այլ արտադրական կոոպերատիվ

միավորումները պետք է այն ձևով կազմակերպվեն, վորպեսզի նրանք հետադաշոււմ կամավոր ձևով անցնեն ավելի բարդ միավորումների՝ անբաժան կապիտալի հասարակականացումով: Կոլլեկտիվ տնտեսությունների զարգացման այդ ճանապարհը լավ արդյունքների յե հասցնում: Ռեինակ կարող է ծառայել Ռմսկի շրջանի «Լուսավոր ուղի» կոլլեկտիվ տնտեսությունը, վորը կազմակերպվել է սկզբում վորպես ընկերություն, մեկ տարուց հետո փոխվել է արտելի, ապա՝ կոմմունայի:

ՅԵՏԵԱՆՔԻՈՒՆՔ ԾՐԱԳՐՈՎ ԿԱՌԱՐԻՐ

Գյուղատնտեսական կոլլեկտիվը պետք է ճիշտ հաշվի առնի թե ինչ ունի նա, իր ունեցած բանվորական ուժը, հաշվի առնի, տնտեսության այս կամ այն մասը, նկատի ունենա, թե շուկայում գյուղատնտեսական վոր մթերքների և ինչ անասունի ամենից ավելի պահանջ կա և, հետևապես, ինչն է ավելի ոգ-

տավետ արտադրել: Յեւ պետք է մասնա-
դիտացնել տնտեսությունը, այսինքն, ար-
տադրի այն միջերջները, վորոնք ավելի շա-
հավետ են: Տնտեսական ծրագիրը պետք
է այն հաշվով կառուցվի, վորպեսզի ամ-
բողջ տնտեսությունը հնարավոր չափով
ավելի յեկամուտ բերի: Տուրաքանչյուր կոլ-
լեկտիվ տնտեսություն պետք է ունենա
թեկուզ քարզ հաշվապահություն և ամենա-
պարզ հաշվառում, վորպեսզի կարելի լինի
տեսնել թե տնտեսության վոր մասերն ա-
վելի շահ են բերում, վորոնք՝ քիչ, վորոնք
շահաբեր չեն:

Քաղաքացու աշխատանքի տեղադրողականու-
թյունը

Տնտեսությունը ուղիղ և ուղտավետ
ձևով տանելու համար հարկավոր է ուղիղ
կազմակերպել աշխատանքը: Կոլլեկտիվ տըն-
տեսության յուրաքանչյուր անդամ, յուրա-
քանչյուր մասնակից պետք է իր տեղում
լինի և կատարի իր վորոշ աշխատանքը հա-
մաձայն կոլլեկտիվ տնտեսության ղեկա-

վարի կամ խորհրդի մշակած ընդհանուր
ծրագրի: Աշխատանքի այսպիսի ընթացքի
դեպքում պարտադիր պայման է աստիճա-
նաբար բարձրացնել աշխատանքի արտադրո-
ղականությունը, վորովհետև առանց աշխա-
տանքի արտադրողականության աճման,
տնտեսության աճումն անհնարին է:

Անհրաժեշտ է աշխատանքի արտադրո-
ղականությունը բարձրացնելը կապել անձ-
նական շահագրգռվածության հետ: Ամեն
մեկը կատանա միմիայն այն, ինչ կվաստա-
կի ինքը, և ինչքան լավ է կատարված աշ-
խատանքը, այնքան բարձր է վարձատրվում
այն: Կարելի չէ մտցնել նաև լավ աշխա-
տանքը պարգևատրելու կարգ: Թե մեկ և
թե մյուս դեպքում կոլլեկտիվ տնտեսու-
թյան ընդհանուր միջոցների հաշվին, պետք է
անաշխատունակներին ապահովել փայերով:

Աշխատանքի վարձատրության չափը
պիտի համապատասխան լինի տնտեսության
ունեցած միջոցներին: Միջոցների գլխավոր
մասը պետք է ծախսվի արտադրությունը

զարգացնելու վրա, վորովհետև միայն տըն-
տեսութեան զարգացումը կարող է ապա-
հովել, վոր կոլլեկտիվ տնտեսութեան յու-
րաքանչյուր անդամ կարող է բարւոյն կյանք
ունենալ:

Մարգկային աշխատանքը փոխարինի
մեքենայով

Տրակտորներ, ցանոդ, կախող և այլ մե-
քենաներ գործադրելն ավելի ձեռնտու յէ,
քան մարդկային աշխատանքը: Առանց մե-
քենաների չէ կտրելի խոշոր հասարակա-
կայնացրած տնտեսություն հիմնել: Այնտեղ,
ուր մեքենաներ չեն գործադրվում, ուր
ամբողջ աշխատանքը կատարվում է մարդ-
կային աշխատանքով, կոլլեկտիվը քայքայող
ներքին անհամերաշխություններ և տարա-
ձայնություններ ավելի շատ են տեղի ու-
նենում, քան այնտեղ, ուր գործադրվում են
մարդկային աշխատանքին փոխարինող բարդ
մեքենաներ:

Ժողկոմխորհի մարտ ամսի 16-ի դեկ-
րետով բոլոր մատակարարող մարմիններին

ցուցմունք եւ տրվում, վորպեսզի նշանք,
առաջին հերթին, մեքենաներով ապահովեն
գյուղատնտեսական կոլլեկտիվներին:

Կոլլեկտիվ ճնշեսուկքյաճ յուրաքանչյուր աճրաճ
իճ, պիճի եւ մուծի ըճգուճվելիս յիվ իճ, պիճի
սճճա հեռաճալիս

Կոլլեկտիվ տնտեսության յուրաքան-
չյուր անդամ ընդունվելիս պետք եւ մուծի
մուտքի վճար եւ, բացի դրանից,
այնչափ փայավճար, վոր հարկավոր եւ հիմ-
նական կապիտալի եւ հասարակակայնացրոճ
տնտեսություն վարելու համար:

Բացի դրանից, վորպեսզի կոլլեկտիվ
տնտեսության մեջ մտնող անդամները շու-
հագրգուճ լինեն բացի փայավճարներից
նաե իրենց ունեցաճ միջոցները ավանդի
ձևով կոլլեկտիվ տնտեսության մեջ դնելու,
հնարավոր եւ այդ ավանդների համար տըն-
տեսության ընդհանուր յեկամուտից վորոք
տուկոս տալ, իսկ կոլլեկտիվից հեռանալու
դեպքում տրվի շահի այն մասը, վորը հա-
նում եւ մուծվաճ փային, բացի շահի այն

մասից, վորը հատկացրած է կոլլեկտիվ
տնտեսութեան անբաժանելի կապիտալին:

Պեճէ և կոլլեկտիվ տնտեսութեան համար
գեղարարներ պատրաստել

Կոլլեկտիվ տնտեսութեանները շինարարութեան հիմնադրուող խոշոր հասարակականացրած տնտեսութեան հիմնելու և այդ տնտեսութեանը վարելու անբավարար պատրաստականութեանն է: Այդ խոշնգոտը, վոր կապված է մեր գյուղի կոլլեկտիվացման հետամնացութեան հետ, մենք պետք է հաղթահարենք: Հարկավոր է վերակազմակերպել, նախապատրաստել կոլլեկտիվ տնտեսութեանները բանվորական ուժը և առանձնապէս անհրաժեշտ է ուշադրութեան դարձնել կոլլեկտիվ տնտեսութեանները կազմակերպիչներ և ղեկավարներ պատրաստելուն: Դրա համար անհրաժեշտ է կոլլեկտիվ տնտեսութեաններում կամ մանր շէնքանների միավորումներով կազմակերպել կուլտուրայի խնչպէս կոլլեկտիվի անդամների, հողայնապէս և, առանձնապէս, ղեկավարների համար:

Հարկաւոր եւ ամրապնդել կապք գյուղացեանս-
կան կոոպերացիայի հետ

Կոլլեկտիւ մտնեսությունները գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցից դուրս, չեն կարող հաշտությամբ զարգացնել իրենց տնտեսությունը, վորովհետեւ տնտեսության արտադրած մթերքների ամենից ավելի կազմակերպւած վաճառքը տեղի յե ունենում գյուղատնտեսական կոոպերացիայի միջոցով, այլև գյուղատնտեսական կոոպերացիան եւ, վոր ամենից ավելի ներդաստաւոր պայմաններով արտադրության միջոցներ (գործիքներ, մեքենաներ եւ այլն) եւ մատակարարում գյուղացիական տնտեսություններին, նույն թվում նաև կոլլեկտիւ մտնեսություններին: Գյուղատնտեսական կոոպերացիան, միավորելով բաժան բաժան մանր տնտեսությունները՝ միասին վաճառքի հանելու նրա մթերքները, մատակարարելու եւ վարկավորելու նրանց, շուկայից ջշելով մասնավոր միջնորդներին, գյուղական տնտեսության մեջ մեծ թվով

մեքենաներ գործադրության դնելով կոլլեկ-
տիվ տնտեսությունների հաջող զարգաց-
ման համար ստեղծում ե անհրաժեշտ պայ-
մաններ:

Իրա շնորհիվ, յուրաքանչյուր կոլլեկ-
տիվ տնտեսություն պետք ե դառնա գյու-
ղատնտեսական կոոպերացիայի բաղկացու-
ցիչ մասը:

ԽՍՀՄ կենտգործկոմի և Ժողկոմխորհի
դեկրետը առանձնապես ընդգծում ե, վոր
կոլլեկտիվ տնտեսության շարժումը հաջող
կերպով կզարգանա միմիայն սերտորեն
կապվելով գյուղատնտեսական կոոպերացի-
այի հետ:

Հաքկավոր ե պայքար մղել կեղծ կոլ-
լեկտիվ տնտեսությունների դեմ, այսինքն
այնպիսի միավորումների դեմ, վորոնց ան-
դամները կամենում են միայն ոգտագործել
խորհրդային իշխանության կողմից կոլլեկ-
տիվներին վերապահած հարկային, վարկա-
վորման, արտագրության միջոցների մա-
տակարարման և այլ արտոնությունները:

Լինում են գեպքեր, յերբ կուլակները կամ
առևտրականները կոլլեկտիվ տնտեսության
մեջ մտնում են նրա համար, վորպեսզի
խուսափեն հարկերից և ստանան այս կամ
այն արտոնությունը:

Կեղծ կոլլեկտիվ տնտեսությունների
դեմ պայքարը պետք է տարվի վոչ միայն
վարչական միջոցներով, այլ և տնտեսական
և կազմակերպչական ազդեցությամբ, որի-
նակ, վորքը բաշխելիս, մատակարարելիս,
հարկային արտոնությունները քննելիս և
այլն:

Այս պեժ է ղեկավարի կոլլեկտիվ տնտեսության
օրհաւառությունը

Գյուղատնտեսական կոլլեկտիվների շի-
նարարության ղեկավարությունը մինչև
այժմ այնքան ել բավարար չեր, իսկ հա-
ճախ նույնիսկ ղեկավարությունը բացակա-
յում եր: Յեւ գյուղատնտեսական կոոպե-
րացիայի միությունները, և հողային վար-
չությունները անհրաժեշտ ուշադրություն
չեւին դարձնում կոլլեկտիվ տնտեսություն-

ների շահերին ու կարիքներին: Կոլլեկտիվ տնտեսությունների վերաբերյալ ԽՍՀՄ կենտգործկոմի և Ժողկոմխորհի վորոշումով նախատեսանվում է կոլլեկտիվ տնտեսությունների ղեկավարությունը հանձնել միացյալ կոլլեկտիվ տնտեսություններին, իսկ կոլլեկտիվ տնտեսությունների միջոցների վաճառքի, նրանց արտադրական միջոցներ հայթայթելու և վարկավորման գործառնական աշխատանքը հանձնել գյուղատնտեսական կոոպերացիայի միություններին և վարկային հիմնարկներին: Ընդհանուր ղեկավարությունը գտնվում է պետական իշխանության՝ Հողագործության Ժողովրդական Կոմիտեի ատի և նրա տեղական մարմինների ձեռքում: Կոլլեկտիվ տնտեսությունների շինարարությանն ընդհանուր ուղղություն տալիս է կոլլեկտիվ տնտեսությունների Համամիութենական Խորհուրդը:

Հողային մարմինները, գյուղատնտեսական կոոպերացիայի միությունները պետք է ուժեղացնեն կոլլեկտիվներին գյուղատն-

տեսական ոգնություն ցույց տալու գործը՝
ընթանային և կոռուպցիայով զրուգատնտեսա-
կան ոգնության միջոցով։ Միևնույն ժամա-
նակ, իրենք կոլլեկտիվները ևս պետք և
ինքնագործունեություն հրապարակ բերեն՝
իրենց միջոցներով զրուգատնտեսներ ունե-
նալու։

Պոլսեկեթի ճեփսությունների խմբակային մի-
ավորումը

Կոլլեկտիվ տնտեսությունները պայմա-
նագրային սկզբունքներով միանալով, ստեղ-
ծում են խմբակային միավորումներ, վոր-
պեսպի իրենց միջոցներով զրուգատնտես
հրավիրեն, միասին կազմակերպեն արդյու-
նագործական և ոժանդակ ձեռնարկություն-
ներ և այլն։

Խմբակային միավորումները ղեկավա-
րելու համար կազմվում են խմբակային մի-
ավորման խորհուրդ, միավորման մեջ մտած
կոլլեկտիվ տնտեսությունների ներկայացու-
ցիչներին։

Վորենգից դրամ վերցնել կոլլեկտիվ օճեստոլթյուն-
ներն միավորումների առխառանգների համար

Կոլլեկտիվ տնտեսությունների միա-
վորումների միջոցները պետք է կազմվեն
կոլլեկտիվ տնտեսությունների իրենց հատ-
կացումներից, դյուղատնտեսական կոոպե-
րացիայի միությունների մուծումներից,
պետական բյուջեյով յեղած և այլ մուտ-
քերից:

Հարկերի յեվ վարկավորման արդյունքները

Կոլլեկտիվ տնտեսություններին միա-
նական դյուղատնտեսական հարկից 25%
զեղչ է արվում: Արտոնությունները սահ-
մանվում են յուրաքանչյուր կոլլեկտիվ
տնտեսության հարկը վորոշելիս:

Որենքով կոլլեկտիվ տնտեսության հա-
մար սահմանված արտոնությունը չտրվելու
դեպքում, պետք է քողոքարկել այդ մասին
շրջանային, ապա և գավառային հանձնա-
ժողովին:

Կոլլեկտիվ տնտեսությունների արդյու-

նապարժական և ոժանդակ ձեռնարկություններին վրա տարածվում են բոլոր այն արտոնությունները, վորոնք կիրառվում են սկզբնական գյուղատնտեսական կոոպերացիայի վերաբերյալ:

Կոլլեկտիվ տնտեսություններին հիմնական դրամագլուխների զարգացումն ուժեղացնելու համար կենտրոնական և հանրապետական գյուղատնտեսական բանկերում կազմված ե հատուկ դրամական ֆոնդ, գյուղատնտեսական կոլլեկտիվներին արտոնյալ և յերկարատև վարկ տալու համար: Այդ ֆոնդից վարկավորելու ժամկետ սահմանված ե 5-ից մինչև 10-ը տարի, տարեկան 5%-ով: Գյուղատնտեսական վարկի ընդհանուր միջոցներից վեչ պակաս քան 40 տոկոսը տրվում ե յերկարատև վարկով:

1926-27 տնտեսական տարում ԽՍՀՄ Կոլլեկտիվ տնտեսություններին տված վարկի ընդհանուր գումարը հավասար ե քսան միլյոն ռուբլու.

Բացի դրանից, կոլլեկտիվ տնտեսու-

թյունները վարկեր պիտի ստանան պետական բյուջեյով բաց թողած միջոցներից՝ ա) յերաշտի գեմ պայքարելու, բ) կենտրոնական սեահողային նահանգների տրնտեսությունները վերականգնելու, գ) չքավորական ֆոնդին և այլ նպատակներով, ըստ վորում կոլլեկտիվ տնտեսությունները համարվում են վորպես գյուղական տնտեսությունը դարգացնելու և բարվոքելու համապատասխան միջոցներ նախաձեռնող ուղեցույցներ և պետք է, բացի վարկավորման հիշատակած տեսակներից, ոգտվեն ամեն տեսակ վարկերից:

Ամեն մի գյուղատնտեսական բանկ, գյուղատնտեսական վարկի ընկերություն, գյուղատնտեսական կոոպերացիայի միություն, վոր իրավասու յե և վարկավորելու միջոցներ ունի, պետք է իր վարկավորման ծրագրում ունենա կոլլեկտիվ տնտեսությունների ն վարկավորելու հողված՝ համաձայնեցնելով այն կոլլեկտիվ տնտեսությունների միավորումների հետ:

Որենքը սահմանում է, Վոր կոլլեկտիվ տնտեսություններին բարդ մեքենաներ, առանձնապես տրակտորներ, պլտի մատակարարվի առաջին հերթին և ավելի արտոնյալ պայմաններով, քան անհատական գյուղացիական տնտեսություններին, թեկուզ և վերջիններս մտած լինեն գյուղատնտեսական կոոպերացիայի ցանցի մեջ:

Պետական հողային գույքի այն հողերը, Վորոնք հանձնված են կոլլեկտիվ տնտեսություններին, վարձակալական հիմունքներով ոգտապործելու, պետք է հանձնվեն աշխատավորական ոգտապործման, առանց հողամասերը բաժան-բաժան անելու: Յեթե կոլլեկտիվ տնտեսությունը լուծարքի յեյենթարկվում, հողամասը հանձնվում է նոր կոլլեկտիվ տնտեսության կամ վերադարձվում է հողային վարչության՝ կրկին ուրիշ կոլլեկտիվ տնտեսությունների հանձնելու համար: Կոլլեկտիվ տնտեսությունների վարձակալական բոլոր ասպարքները զեղչվում

են: Այդ մասին մատնանշված և կենտրոն-
կումի և ժողկոմխորհի նույն 16 մարտի
1927 թ. վերաշման մեջ:

1927 թվի ընթացքում պետք է կոլ-
լեկտիվ տնտեսություններին հանձնվի ձրիա-
պես ոգտագործելու՝ վորպես իրենց անբա-
ժանելի դրամագլուխ՝ պետական մար-
միններից նրանց ստացած գույքը (ինվեն-
տար, շենքեր և այլն):

Կոլլեկտիվ տնտեսություններին իրա-
վունք է տված ոգտվելու տեղական նշա-
նակություն ունեցող անտառներից, հողա-
յին ընկերություններին համահավասար
կերպով: Բացի դրանից, կոլլեկտիվ տնտե-
սությունները, անտառանյութերով ապա-
հովվելու տեսակետից հավասարեցված են
գյուղական չքավորներին:

Որենքը պարտադրել է բոլոր հանրա-
պետությունների Հողագործության ժողովր-
դական Կոմիսարիատներին շտապ կերպով
ափարտելու կոլլեկտիվ տնտեսությունների
հողաշինարարության գործը, իսկ հետագայում

իրենց տարեկան հողաշինարարական աշխատանքների պլանի մեջ մտցնել, պլանը կազմելիս հիմնվող բոլոր գյուղատնտեսական կոլեկտիվները, ըստ վարում, կոլեկտիվ տնտեսությունների հողաշինարարությունը պիտի տեղի ունենա Հողօգտկոմատների հողաշինարարական աշխատանքների համար բաց թողած միջոցների հաշվին:

Շրջանային գյուղատնտեսների կողմից կոլեկտիվ տնտեսություններին ցույց տված գյուղատնտեսական ոգնությունը պիտի ուժեղացվի: Նմանապես պետք է ուժեղացվին և գյուղատնտեսական կոոպերացիայի միությունների կողմից ցույց տված գյուղատնտեսական ոժանդակությունը:

**Արդյունագործական յեվ ոժանգակ ձեռնարկությունները կոլեկտիվ տնտեսություններին
հանձնելը**

Կոլեկտիվ տնտեսությունների սահմաններում յեղած արդյունագործական և ոժանգակ ձեռնարկությունները պիտի հան-

ձընվեն գյուղատնտեսական կոլլեկտիվներին: Կոլլեկտիվ տնտեսությունների սահմանակից հողերում յեղած արդյունագործական և ոժանդակ ձեռնարկությունները արտոնյալ պայմաններով գյուղատնտեսական կոլլեկտիվներին հանձնելը պետք է ապահովի:

Արդյունագործական և ոժանդակ ձեռնարկությունների հանձնումն այն ձևով պիտի կատարվի, վորպեսզի նրանց աշխատանքը չընդհատվի:

Կոլլեկտիվ տնտեսությունները պարտավոր են վոչ միայն պահպանել իրենց հանձնված արդյունագործական և ոժանդակ ձեռնարկությունները, այլև զարգացնել նրանց: Պետք է հիշել, վոր պետությունը, կոլլեկտիվ տնտեսություններին այդպիսի արժեքավոր գույք հանձնելով, հույս ունի, վոր դրա հետևանքով կոլլեկտիվ տնտեսությունները վոչ միայն իրենք տնտեսապես կաժրապնդվեն, այլև, գյուղատնտեսական միջերջների մշակման միջոցով, կարող կլի-

նեն կոռւերացնել շրջապատի գյուղացիա-
կան անհատական տնտեսությունները:

Արդյունագործական և ոժանդակ ձեռ-
նարկությունները պետք է կոլլեկտիվ տըն-
տեսություններին հանձնել անկախ այն
հանգամանքից, թե ուժ իրավասության տակ
են նրանք գտնվում:

Կոլլեկտիվ տնտեսւթյունների քաղաքական-լու-
սավորական աշխատանքն ու ժեղացնելը

Հոսսավորության ժողովրդական կո-
միտարիատների և նրանց տեղական մար-
մինների, այլև գյուղատնտեսական կոռ-
ւերացիայի միությունների վրա պարտա-
կանություն է դրվում կոլլեկտիվ տնտեսու-
թյուններում ուժեղացնել քաղաքական-
լուսավորական աշխատանքը: Հարկավոր է
տուաշին հերթին ուշադրություն դարձնել
վերացնելու կոլլեկտիվ տնտեսությունների
անդամների տեխնիկական անգրագիտու-
թյունը, հիշելով, վոր անգրագիտ մարդը
չի կարող մասնակից լինել խոշոր գյուղա-

կան տնտեսություն հիմնելու և ղեկավարելու գործին: Բացի դրանից, պետք է բարձրացնել անդամների աշխատանքային պատրաստականությունը:

Կոլլեկտիվ տնտեսությունները իրենց շրջապատում յեղած անհատական տնտեսությունների համար վոչ միայն պետք է որինակ հանդիսանան այն բանի, թե ինչպես պետք է տնտեսությունը լավ և շահավետ ձևով վարել, այլև միաժամանակ նրանք պետք է, իրենց անդամների միջոցով, հասարակական-քաղաքական աշխատանք տանեն իրենց շրջապատի բնակչության մեջ, դրա համար կապ հաստատելով քաղլուսվարական կոմիտեների, կուսակցական և կոմյերիտական բջիջների հետ և այլն, բացատրելով կոլլեկտիվ տնտեսությունների նշանակությունը և կոլլեկտիվ տնտեսությունների անցնելու առավելությունները: Իսկ հասարակական-քաղաքական աշխատանքներին մասնակցելու համար, կոլլեկտիվ տնտեսության անդամները

պետք ե նախ և առաջ իրենք պատրաստ-
ված լինեն:

Ահա ինչ են ասում և գրում իրենք
կողեկտիվ տնտեսության աշխատավորները,
կողեկտիվ տնտեսություններում կուլտաշ-
խատանքի նշանակության մասին:

Ընկ. Միխայլովսկին Սամարայից գրում
է՝ «Կոմսոնաների քայքայման դեպքեր
ամենից ավելի նկատվում ե այն տեղե-
րում, ուր կուլտուր-լուսավորական աշխա-
տանքը հալածված ե: Առանց գիտության,
տնտեսությունը բարձրացնել հնարավոր չե:
Ուսում, գյուղատնտեսական գիտություն,
տեխնիկա,—ահա թե ինչ ե հարկավոր մեզ
նախ և առաջ»:

Ընկ. Ուլյանովը (Սիբիր, Աշինսկու
կողեկտիվ տնտեսության սեկցիայի նախա-
գահը) գրում է՝ «Ձքավոր և միջակ գյու-
ղացիության մասսաները կողեկտիվ տնտե-
սությունների մեջ գրավելու գործը կարե-
ւի յե ուժեղացնել մասայական աշխատան-
քի միջոցով: Դրան զուգընթաց, ի հարկե,

ատ կարեւոր ե, վորպեսզի իրենք կոլլեկ-
տիվ տնտեսությունները իրենց կենցաղով
հրապարիչ լինեն անհատական տնտեսու-
թյուն ունեցողներէ համար: Այդ բանը
Սիբիրում արդեն բավական նկատելի յե:
Այսպես, Բիյսկու շրջանում կա «Կարմիր
Արծիվներ» անունով մի կոլլեկտիվ տըն-
տեսություն, վոր գոյություն ունի 1920
թվից: Այդ կոլլեկտիվ տնտեսության մեջ
կյանքն այնքան լավ ե դրված, վոր նրան
նայելով, 100 տուն ունեցող Նիկոլաևսկի
գյուղը ամբողջապես միացավ և կոմմուն-
նա հիմնեց»:

Կոլլեկտիվ տնտեսության յուրաքան-
չյուր ակտիվ անդամի հոգսը պետք ե լի-
նի՝ կոլլեկտիվ տնտեսության մեջ կազմա-
կերպել գյուղատնտեսական խմբակ, շրջա-
պատի գյուղացիներին քաշել ալդ խմբակի
մեջ, ամբողջութեամբ վերացնել անգրագի-
տությունը և կիսագրագիտությունը, գյու-
ղատնտեսների միջոցով մասսայական բա-
ցատրական աշխատանք տանել գյուղական

տնտեսութեան հարցերի և կոլլեկտիվ տնտեսութեան հարցերի առաջնությունների վերաբերյալ:

ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Կոմսունիստական կուսակցությունը և Խորհրդային իշխանությունը բացառիկ նշանակություն են տալիս կոլլեկտիվ տնտեսությունների շինարարության գործին, վորպես կոոպերացիայի միջոցով գյուղի սոցիալիստական վերակառուցման ընդհանուր ծրագրի բաղկացուցիչ կարևոր մի մասի:

Կուսակցությունը՝ կուսակցության Կենտկոմի և համագումարների, մասնավորապես XV-րդ կուսակցական համագումարի վորոշումներով, Խորհրդային կառավարությունը ԽՍՀՄ Կենտգործկոմի և Ժողկոմ-խորհի կոլլեկտիվ տնտեսությունների վերաբերյալ 1927 թ. մարտի 16-ի վորոշումով, նշել են մի շարք գործնական միջոցներ, վորոնք աջակցելու յին կոլլեկտիվ

տնտեսությունների աճման և ամրա-
պնդման:

Հաշվի առնելով դարերով անհատական
տնտեսութեամբ ապրող գյուղացու համար
հասարակականացրած տնտեսութեան անց-
նելու դժվարությունը, կուսակցությունը
թույլ չի տվել և թույլ չի տալիս կոլլեկ-
տիվ տնտեսություններ հիմնելիս, գյուղա-
ցու վրա վորևե ճնշում գործ դնելու: Միա-
ժամանակ կուսակցությունը անհրաժեշտ է
համարում ուժեղացնել գյուղացու համար
ստտիճանաբար խոշոր հասարակական գյու-
ղական տնտեսութեան անցնելու անհրա-
ժեշտութեան և առավելությունների մասին
յեղած պրոպագանդը, և միշտ կիրախուսվի
գյուղում յեղած ամեն տեսակի կոլլեկտիվ
տնտեսություններ հիմնելու աշխատանքը:

Ձեռնարկ ցրանց համար, ովքեր կցանկանան
մանրամասն ծանոթանալ, քե կուսակցությունը
յեվ Խորհրդային իսխանությունը ինչպես է
ոգնում կոլլեկտիվ ճեեսություններին

Կրուտոշինսկի.—Ինչ պետք է իմանա

կողեկտիվ տնտեսութեան յուրաքանչյուր
անդամ: (Հրատ. Կողտնտ. Կենտրոնի). հա-
վելված ԽՍՀՄ Կենտրոնականի և Ժողկոմ-
խորհի կողեկտիվ տնտեսութեաններին վե-
րաբերյալ վորոշումը:

Ձեռնարկներ դեկտմբերի համար


Բացի Կրուտոշինսկու գրքից

1) 15-րդ կուսամագումարի բանաձևը
գյուղում աշխատանք տանելու մասին,
հատված I—III, կետ 5, 6, 8—16, 18:
Հատված IV, կետ 1, 3, 4:


2) Գուրով. — Գյուղական տնտեսութեան
գործնական հարցերը 15-րդ համագումար-
ում (հրատ. «Московский Рабочий», գինը
50 կոպ.) եջ 152—163:


3) Լեժնեվ-Փինկովսկի. — Գյուղական
տնտեսութեան ճգնաժամը (հրատ. «Москов-
ский Рабочий», գինը 25 կոպ.) եջ 44—45:

4) Կողեկտիվ տնտեսութեաններին հա-
մագումարի բանաձևերը:









ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038749

A $\frac{T}{3787}$